ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

05.03.2012թ.
162-ի 4

Հայաստանի Հանրապետական
կուսակցության նախագահ
պարոն Սերժ Սարգսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,

2012թ.-ի փետրվարի 4-ին Հայաստանի Հանրապետական կուսակցության անունից հեռախոսազանգի միջոցով կուսակցության անդամներից խնդրվել էր տրամադրել տեղեկություններ, թե կուսակցության անդամի ընտանիքում քանի ընտրող կա, նրանց անունները, ազգանունները, հայրանուններն ու ծննդյան տարեթիվը:

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք հայտնել, թե Հայաստանի Հանրապետական կուսակցությունն ի՞նչ նպատակով է հավաքվել անհատական տվյալներ հանդիսացող վերոնշյալ տեղեկությունները կուսակցության անդամների ընտանիքների վերաբերյալ:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան